

ՄԱՐԴՈՒ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՓՈՒՆՖԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՀՈՎՅԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ «ԲԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ» ԶԵՐԹՎԱԾՈՒՄ

Ս. Ա. ԶԱԲԱՐԹԱՆ

Միջնադարի նշանավոր հայ իմաստասեր, աստվածաբան, բանաստեղծ, տոմարագետ, ուսուցչապետ Հովհաննես Իմաստասեր Սարկավագի (1045-1129) «Ասացեալ Բան իմաստութեան ի պատճառս զքօսանաց առ ձագն, որ զաղօթանցոցս նորա ճողողէր քաղցրածայն, որ կոչի սարիկ» պոեմը միջնադարյան հայ գրականության այն ստեղծագործություններից է, որում իմաստասեր բանաստեղծը շոշափում է կրոնական և աստվածաբանական-իմաստասիրական գաղափարներ, գեղարվեստական ստեղծագործությունն օգտագործում ուսուցողական-խրատական ու քարոզչական-դաստիարակչական նպատակով: Հայ գրականության և իմաստասիրության պատմաբանները, վերլուծելով Հովհաննես Սարկավագի գողտրիկ ու անզուգական այս քերթվածը, գերազանցապես այն գնահատել են իբրև արվեստի ծագման, էության, բնության և արվեստի փոխհարաբերության հարցերին նվիրված խոհաիմաստասիրական ստեղծագործություն: Այս հայեցակետից քննելով «Բան իմաստութեան» քերթվածի բովանդակությունը՝ Մ. Աբեղյանը հանգում է այն եզրակացության, որ այդ պոեմում Հովհաննես Սարկավագը առաջ է քաշում արվեստի մասին նոր տեսություն: «Սարկավագ վարդապետի «Բան իմաստութեան» քերթվածի բովանդակությունից պարզ երևում է, որ եղել է ձգտում դեպի բնությունը և ռացիոնալիզմ կրոնի մեջ, որով գլխավոր նշանակությունը տրվում է ոչ թե հայտնությանը, այլ բնության դիտողությունից բանականությամբ ձեռք բերած ճշմարտություններին: Դրա արգասիքն է եղել արվեստի ծագման նոր տեսությունը և առհասարակ մի նոր արվեստի պահանջը: Մեր իմաստասեր բանաստեղծը շատ հաջող լուծել է կարևոր գրական խնդիրը, պնդելով, թե բանաստեղծը նմանում, հետևում է բնությանը, իրականությանը»<sup>1</sup>: Մյուս հետազոտողները, հետևելով Մ. Աբեղյանին, կրկնում են այն միտքը, թե Հովհաննես Սարկավագը գեղարվեստական ստեղծագործության մեջ ամբողջությամբ ժխտում է աստվածային հայտնությունը, կոչ անում սովորել բնությունից, բնությունը դիտել իբրև կատարյալ արվեստի չափանիշ: «Հովհաննես Իմաստասերն ընդգծում է այն միտքը, - գրում է Վ. Չալոյանը, - որ արվեստի խնդրում պետք է դիմել ոչ թե սուրբ գրքին, այլ ռեալ իրականությանը, որ գեղարվեստական ստեղծագործությունը պետք է բացատրել բնության, մարդու վրա այդ բնական միջավայրի ներգործությամբ: Դա արդեն այն ժամանակների համար մի մեծ նորություն էր հայ գրականության մեջ, որն իրավացիորեն ընդունվում է որպես հայկական վերածնության գաղափարախոսության արտահայտություն»<sup>2</sup>: Ըստ գրականագետ Հ. Թամրազյանի՝ Սարկավագի պոեմում առաջադրվում է հետևյալ տեսակետը. «Բնությունը կատարյալ է, իսկ մարդկային արվեստը՝ կիսակատար, մարդը ձգտում է աշակերտել բնությանը՝ արվեստի մեջ կատարելության հասնելու համար: Սա ամբողջովին հեղաշրջող մի տեսակետ էր մարդկային արվեստի ու բնության կապի մասին»<sup>3</sup>: Իմաստասերի կարծիքով, շարունակում է Հ. Թամրազյանը, մարդկային արվեստն ըստ էության իր նյութով ու նպատակներով հեռու է կրոնական միստիկայից և կապված է մեծ բնության ուսումնասիրության և

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Եր., 1970, էջ 74:

<sup>2</sup> Վ. Չալոյան, Հայկական Ռենեսանս, Եր., 1964, էջ 168:

<sup>3</sup> Հ. Թամրազյան, Հայ քննադատություն, գիրք Բ, Եր., 1985, էջ 247:

մարդկային փորձի հետ: «Եթե Նարեկացին, հայտնությունն ընդունելով հանդերձ, մնացած բոլորը համարում է անդուլ աշխատանքի, ձգտման ու տքնության արդյունք, ապա չափազանց հմուտ ձևով խմաստասերն ամբողջովին դուրս է մղում այդ հայտնությունը, որն ի դեպ կամա թե ակամա ընդունվում էր բոլորի կողմից: Փոխարենը նա բարձրացնում է մարդու անդադար լարվող, որոնող խոհականությունը, բնության հետազոտությունը և փորձը, բազմուսումնությունը, կրթասիրությունը, անվերջ վարժությունն ու հմտությունը»<sup>4</sup>:

Բայց արդյո՞ք միջնադարի ճշմարիտ հայ աստվածաբանը, կրոնական և դավանաբանական հարցերի հռչակված մեկնաբանը «Ժխտում» է Հայտնությունը թեկուզև որպես արվեստի աղբյուր, արդյո՞ք նա Հայտնության և Բնության միջև տեսնում է այնպիսի հակադրություններ, որոնք կարող էր տեսնել, դիցուք, Վերածննդի դարաշրջանի հումանիստական գաղափարախոսության ներկայացուցիչը: Արդյոք ունե՞նք բավարար հիմքեր, որպեսզի ճշմարիտ աստվածաբանին ներկայացնենք իբրև աստվածային Հայտնությունը մերժող գեղագետ-փիլիսոփա: «Բան իմաստութեան» պոեմի, ինչպես նաև Սարկավագի մյուս աշխատությունների անաչտ համատեքստային վերլուծությունը ոչ մի հիմք չի տալիս նրան ներկայացնելու որպես «Հայտնությունը» ժխտող մտածող: Այս տեսակետը պաշտպանում է Կ. Միրումյանը, սակայն տալիս է յուրօրինակ հիմնավորում: Նրա կարծիքով, «Սարեկը, որ խորհրդանշում է բնությունը, վերջինիս հավատարիմ մնալու համար պարզակել է հայտնության ունակությամբ («Արդ կացի ի բնականին, որոյ պարզևն է յայտնութիւն»): Հայտնությունը նրա մոտ ձեռք է բերում յուրօրինակ երանգ և դիտվում է որպես բնությունից տրված, բնական ընդունակություն, որը գործում է բնական և սովորովի արվեստների սահմաններում: Ինչ վերաբերում է աստվածային հայտնությանը, ապա սա գործում է հոգևոր գրքերի և հոգևոր երաժշտության ստեղծման ընթացքում և չի տարածվում մարդկային աշխարհիկ ոլորտի վրա»<sup>5</sup>: Այսպիսով, ըստ Կ. Միրումյանի, Սարկավագը ընդունում է հայտնության երկու տեսակ՝ աստվածային և բնական (մարդկային): «Այստեղից միաժամանակ պարզ է դառնում այն հետազոտողների պնդումների անհիմնությունը, - եզրակացնում է նա, - որոնք արվեստի սարկավագյան ուսմունքից լիովին բացառում են աստվածային հայտնության հասկացությունը»<sup>6</sup>: Համամիտ լինելով Կ. Միրումյանի այն մտքի հետ, որ Սարկավագը իր պոեմում չի ժխտում աստվածային Հայտնությունը՝ միաժամանակ անընդունելի են համարում հայտնության բաժանման նրա գաղափարը: Համենայն դեպս, Սարկավագի պոեմը ոչ մի հիմք չի տալիս աստվածային Հայտնությունից զատ ընդունելու բնական հայտնությունը: Առհասարակ, անհասկանալի է «բնական հայտնություն» հասկացության իմաստը:

Սարկավագի պոեմի վերաբերյալ նմանաբնույթ տարածված բնորոշումներն ու զնահատականները պետք է դիտել իբրև Վերածննդի դարաշրջանի չափանիշների տեսանկյունից միջնադարյան տեքստի մեկնաբանություն, մինչդեռ, ըստ իս, այդ պոեմը պետք է դիտարկվի միջնադարյան աշխարհայեցողության համատեքստում: Ստորև կանդրադառնամ այդ հարցին, իսկ առայժմ նշեմ, որ Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան» քերթվածի բովանդակությունը չի հանգում արվեստի էության հարցին: Դերանում դիտարկվում են ավելի լայն ու համընդհանուր՝ մարդու կեցության, նրա կոչումի ու էության, բնական-աստվածայինի և մարդկայինի, բնության և «քաղաքակրթված» մարդու հարաբերակցության իմաստասիրական-աստվածաբանական հիմնահարցեր:

Վերոհիշյալ հիմնահարցերի պարզաբանումը սկսենք «Բան իմաստութեան» պոեմի բովանդակության փիլիսոփայական վերլուծությունից: Այդ քերթվածի գործող անձերից մեկը՝ իր հոգու փրկության հարցով մտազբաղ «կիսակատար իմաստակը», որն իր ամբարած աստվածաբանական-իմաստասիրական գիտելիքների պաշարով

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 249:

<sup>5</sup> Կ. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Եր., 1984, էջ 194:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 195:

ընդունակ է մի երկարաշունչ ու խրթին տրակտատ գրելու տիեզերքում մարդու բացառիկ կարգավիճակի, մյուս արարածների նկատմամբ մարդու գերազանցության ու առավելության մասին, ունկնդրելով իր աղոթարանի միապաղաղ լուրջությունը խախտող՝ բնության հարազատ զավակ սարեկի գեղզեղուն ձայնը, ընկնում է ծանր խոհերի մեջ և ակամայից փոխում իր խորհրդածության նյութը: Նրա ուսանած գիտությունը, ըստ որի մարդը ստեղծվել է Արարչի կողմից կատարյալ ու անթերի և իր գոյեղեն հատկություններով գերազանցում է կենդանիներին ու թռչուններին, կարծես թե չի համապատասխանում իրականությանը: Բնազանցակամ զարմանքի մեջ հայտնված իմաստասեր բանաստեղծին մտատանջում է այն հարցը, թե ինչու՞ է սարեկի արվեստը կատարյալ ու անթերի, իսկ աստվածային արարչագործության պասակի՝ մարդու արվեստն անկատար ու թերի: Եթե Աստված մարդուն արարել է իր պատկերով ու նմանությամբ, նրան օժտել բանականությամբ, ստեղծագործելու բնատուր ձիրքով, անձնիշխան կամքով, կարգել արարված տիեզերքի տեր ու տիրակալ, ապա ինչու՞ մարդկային արվեստը պետք է զիջի սարեկի արվեստին: Ինչպե՞ս կարող է «անվարդապետ, ինքնաբաւ և ինքնուսումն, վայրաբնակ և անքաղաք» սարեկը հասնել այդպիսի կատարելության, իսկ մարդը, որն իր ամբողջ կյանքի ընթացքում ստանում է դաստիարակություն, կրթվում է, աշակերտում իմաստուն վարդապետներին, խորանում գիտությունների և արվեստների մեջ, այսինքն՝ քաղաքակրթվում ու կատարելագործվում է, այնուհանդերձ անկարող է հասնել ինքնու և անքաղաքակիրթ սարեկի արվեստի կատարելությանը: Ո՞րն է այս անբնական ու անտրամաբանական երևույթի պատճառը: Դրա գաղտնիքն իմանալու համար «կիսակատար իմաստակը» պատրաստ է նույնիսկ աշակերտելու սարեկին: Կարծես փոխվում են դերերն ու տեղերը, և այս անգամ անուսում սարեկը դառնում է ուսուցիչ-վարդապետ, իսկ ուսյալ վարդապետը՝ աշակերտ: Եվ ակամայից «վարդապետ» դարձած սարեկը պատրաստակամությամբ ուսուցանում և իմաստության դաս է կարդում նրան, պարզում մարդկային արվեստի անկատարության պատճառները: Եվ հենց այդ պահից էլ արվեստին առնչվող հարցերն անցնում են հետին հորիզոն, և սարեկի խոսքում գերակշռում են կրոնական-բնազանցական խոհերը: Բացահայտելով մարդկային արվեստի անկատարության պատճառները՝ «ինքնուսույց վարդապետը» փաստորեն պարզում է առհասարակ մարդկային կեցության, ամբողջ աշխարհի, այդ թվում կենդանիների ու թռչունների սուկլայի դժբախտության ու ողբերգության պատճառները:

Սարեկի «վարդապետությունը» խարսխվում է Աստծո կողմից տիեզերքի արարչագործության գաղափարի վրա, ըստ որի Աստված ոչնչից ստեղծել է բնությունը, գոյություն պարզել անշունչ և շնչավոր արարածներին: Իբրև իմաստուն արարչագործության արգասիք, տիեզերքը կարգավորված, ներդաշնակ ու կատարյալ մի ամբողջություն է, որի յուրաքանչյուր մաս, յուրաքանչյուր գոյացություն ունի ի վերուստ նախասահմանված կարգավիճակ և դրսևորման «բնական սահման»: Այդ «բնական սահմանը» նախանշում և պայմանավորում է յուրաքանչյուր արարածի կեցության իմաստն ու նպատակը, նաև իրավունքներն ու պարտականությունները, գործելակերպն ու վարվելակերպը, հետևաբար և պատասխանատվությունը: Տիեզերքում հաստատված աստվածային-բնական կարգն անփոփոխ ու անխախտելի է: Ընդամենի, կարգավորված-աստիճանակարգված տիեզերքում բոլոր արարածները, այդ թվում կենդանիներն ու մարդիկ՝ որպես միևնույն Արարչի ստեղծագործության արդյունք և նույն ընտանիքի անդամներ, կապված են իրար հետ, համացեղակից են իրար: Եվ դրանք այնպես են ստեղծվել, որ օգտակար լինեն միմյանց: Ավելին, բնակիչներն ստեղծվել են ըստ տան հնարավորությունների, իսկ տունը՝ բնակիչների կարողությունների և հնարավորությունների համապատասխան: Այսինքն՝ նրանք փոխապայմանավորված ու փոխհարմարեցված են իրար: Տիեզերքը մեկն է, բոլորի «ընդհանուր տունը», «ընտանի և սեպհական» աշխարհը.

**Իմ և ձեր է այս աշխարհ յորում և դուք էք պանդըխտեալ,  
Ընտանի և սեպհական ըստ որում էրըն բնակութիւն,**

**Ի յարարչէն մեզ աւանդեալ տեղի ուսման և ամեցման  
Յարմարական մեզ առ ի պէտս որպէս ունիմք ըզկազմութիւն<sup>7</sup>:**

«Ընդհանուր տան» ներդաշնակությունը խարսխված է աստվածային-բնական կարգի վրա. եթե արարածներից թեկուզ մեկը, դերագանց լինելով, խախտի այդ կարգը, ապա կխախտվի և կփլուզվի տիեզերական ներդաշնակությունը: Բնական-աստվածային կարգի պահպանումը բոլոր արարածների պարտականությունն է, առավել ևս՝ մարդու, քանի որ Աստված պատվեց նրան՝ տեր ու թագավոր նշանակելով բնության և մյուս գոյացությունների վրա: Աստված ամեն ինչ ստեղծեց մարդու համար, նրա ֆիզիկական ու հոգևոր կարիքների բավարարման համար: Եվ ինչպես իմաստուն թագավորը պարտավոր է հոգ տանել իր թագավորության մեջ ապրող հպատակների մասին, այնպես էլ մարդը պարտավոր է մտածել բնության, բուսական ու կենդանական աշխարհների և իր նմանների մասին: Մարդու գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի «ընդհանուր տան» կարգ ու կանոնի պահպանմանը, որովհետև մյուս արարածները, չլինելով անձնիշխան ու բանական, անտրտունջ կատարում են իրենց դերը, անխախտ պահում աստվածադիր կարգն ու օրենքը, Աստծուց ստացած «ավանդ»: Այսինքն՝ դուրս չեն գալիս իրենց «բնական սահմանից»: Այլ է մարդու վիճակը. նա օժտված է բանականությամբ և անձնիշխան կամքով, ազատ գործելու և ընտրելու իրավունքով: Նա կարող էր դրախտում անտրտունջ վայելել Աստծո ստեղծած բարիքները և մնալ անմահ: Սակայն մարդը տեղի տվեց սաղրանքին, լսեց սատանային, պատվիրագանց ու դերագանց եղավ և իր ճակատագրական մեղսագործությամբ ոչ միայն վտարվեց դրախտից՝ ապագա սերունդների թողնելով տխուր ժառանգություն, այլ և խախտեց աստվածային-բնական կարգը:

**Դուք ըզձերն տուժեցայք վասըն յանցման առ արարչին,  
Աստուածութեանըն ցանկացայք, գոր ունէիք՝ զայն կորուսէք.  
Յերկինս ելանելով մերձ առ դրժոխըս սողացէք,  
Ջեռնարկելով առ ճոխանալ՝ աղքատացայք և տնանգացայք,  
Առ գերակայսն ամբառնալով կործանեցայք ի սորոհն վայրս,  
Առ մեծ փառքս դիմեցմամբ վերջոտնեցայք աստ առ մեզ.  
Զարարչին բան մոռացայք և բանսարկուին հաւանեցայք,  
Օրինօք անօրինեալք և անիծիք դատապարտեալք,  
Յանմեղութեան անդ ոչ կացեալք, անթիւ չարեաց եղէք պահակք:  
Զարդարութիւնըն կորուսեալք՝ յոքունց մեղաց եղէք գրտիչք,  
Տեարքըդ ծառայք խխտից գրտայք հաւանութեամբ մարդասպանին (Էջ 323):**

«Յաղագս խրատու մանկանց...» աշխատության մեջ անդրադառնալով այս խնդրին՝ Սարկավազը գրում է հետևյալը. «Դժընդակագոյն քան զգազանացն անխորհրդականութեան յարձակմունս յանձին բերել խտորժելով: Քանզի նոքա ըստ բնութեան սահմանս ո՛չ և միով իւրք յանցանել յանդգին: Այլ և ի ներքս քան զբնութիւնն յոյով անգամ փոփոխեալ զսպին և հանդարտանան կամաց և նախախնամական հրամանի անսալով Աստուծոյ: Իսկ մարդ վայրենայմտեալ յանուսումնութենէ առտել քան եթէ ի չար տրամադրութենէ և յունակութենէ ո՛չ անսալ սիրէ և ոչ իմիք՝ ո՛չ արինաց, ո՛չ բնութեան, ո՛չ նախախնամական ինչ այցելութեան Աստուծոյ» (Էջ 309): Այսպիսով, մարդը չի սիրում անսալ ո՛չ օրենքներին, ո՛չ բնությանը, ո՛չ էլ նույնիսկ նախախնամությանը, ընդամին, առավելապես «վայրենայմտեալ յանուսումնութեան» պատճառով: Փաստորեն, մարդը խախտում է թե՛ իր բնության և թե՛ արարչակարգի «աստվածային» կարգը: Մարդու կարգազանցության հետևանքով փլուզվեց համընդհանուր տիեզերական ներդաշնակությունը, ամեն ինչ խառնվեց իրար: Սարեկը հատկապես շեշտում է այն միտքը, որը մարդու մեղսագործությունը պատճառ հանդիսացավ համընդհանուր ողբերգության համար: Դրա հետևանքով անհամերաշխություն ու թշնամություն

<sup>7</sup> Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 323: Այսուհետ այս գրքից մեջբերումների հղումները կտրվեն շարադրանքում՝ նշելով միայն էջահամարը:

առաջացավ արարածների միջև, նույնիսկ մարդուն սպասավոր կենդանիները ընդվզ-  
զեցին նրա դեմ՝ «ծառայքս ի ձեճջ ապրտամբեալ, որպէս և դուք ի տեառնէն»: Մար-  
դու կարգազանցությունը պատճառ դարձավ ոչ միայն մարդկային, այլև համատիեզե-  
րական ողբերգության: Եվ դժբախտությունն այն է, որ նրա մեղսագործությունից տու-  
ժեցին բոլորովին անմեղ արարածներ, որոնք ո՛չ բարեխղճան աշտարակ են կառուցել,  
ո՛չ զազրելի մեղքեր գործել, ո՛չ էլ վնասել ուրիշներին.

**Բայց և անմեղքս վնասեցաք վասըն ձերոյ, ժրպրհութեան,  
ի փառս ձեր մեք գոյացեալք և վասըն ձեր ապականեալք,  
Ոչ միայն մահուամբ, այլ և սաստիկ գանաբբութեամբ,  
Նդ ընկալողացդ ըզտեառըն կամըս չընկալողքս ըզգիտութիւն,  
Ընդ ազատ կամաց ունողսրդ հետևեալքս ըստ բընութեան,  
Արդ՝ մեզ և ձեզ առ հասարակ եղէք զըտիչըք կորըստեան,  
Զի և ընդ մեր իսկ տուգանաց պարտիք համար տալ արարչին (էջ 323-324):**

Գնալով սարեկի խոսքում ուժեղանում են մեղադրական շեշտերը ըմբոստ մար-  
դու կորստաբեր գործունեության վերաբերյալ: Մարդու անհեռատես արարքների  
հետևանքով բնությունը նույնպես դուրս է գալիս իր բնականոն հունից. պարբերա-  
բար տեղի են ունենում բնական աղետներ՝ երաշտներ, երկրաշարժեր, ջրհեղեղներ և  
այլն, որոնց հատկապես դժվար են դիմանում անպաշտպան ու անձեռնհաս կենդա-  
նիները: Եթե մարդը հնարամտության և մտքի օգնությամբ իր համար ստեղծել է գո-  
յատելիու պայմաններ (կացարաններ, տներ, քաղաքներ և այլն), եթե վնասաբեր հի-  
վանդությունների դեմ գտել է հակազդելու ձևեր, ապա կենդանիները ո՛չ տուն կարող  
են կառուցել, ո՛չ մթերք ամբարել, ո՛չ իրենց բժշկել, ո՛չ էլ դիմագրավել բնության ար-  
հավիրքներին: Սարեկը դատապարտում է մարդուն, հասկացնում «կիսակատար ի-  
մաստակին», որ մարդը կատարել է տիեզերական չափերի հասնող հանցագործու-  
թյուն: Մարդը, որը Աստծո կամոք կոչված էր տնօրինելու երկրի վրա գտնվող արա-  
րածներին, պահպանելու Աստծո կողմից հաստատված բնական կարգը, ինքն է հան-  
դես գալիս որպես կարգազանց: Ուստի, նա ոչ թե պետք է մեղադրի մյուս արարած-  
ներին, ի մասնավորի սարեկին, այլ ամենայն լրջությամբ խորհի իր կորստաբեր գոր-  
ծողությունների հետևանքների մասին: Մարդը պետք է Աստծո առաջ պատասխան  
տա իր կատարած հանցանքների համար.

**Արդ՝ եթէ այսքանեօք մեղօք գորըս թունեցաքըղ վերագոյնդ  
Ջըրկեցայք դուք ի կենաց և յընտանի բնակութենէ,  
Մեզ զի՝ էք մեղադիր, որ չըրրկեցաք գոք ի տեղոյ,  
Ոչ անցաք ըզսահմանաւ, գոր ավանդեաց մեզ արարչին.  
Ջըրկումըն մեր ի ձեճջ, և դուք ըզմէճջ ամբաստանէք.  
Իրաւամբք դատեցարուք ըստ հրամանի ըստեղծողին (էջ 324):**

Սարեկի բերած մեղադրական փաստարկներն այնքան համոզիչ են, որ ուսյալ  
բանաստեղծը ստիպված ընդունում է իր պարտությունը, այսինքն՝ խոստովանում է  
մարդու կատարած հանցանքները և իրեն պատասխանատու ճանաչում դրանց ող-  
բերգական հետևանքների համար: «Ես միայն մոլորեցայ յուղիղ շաղագ, արքունա-  
կան ճանապարհաց» (էջ 325), արդեն մեղանշում է բանաստեղծը իր մի այլ երկում՝  
«Առ Սարգիս ողբք»:

Այսպիսով, ըստ սարեկի վարդապետության, մարդը գրկվել է աստվածային  
շնորհից, ստեղծագործելու բնատուր ձիրքից, որովհետև պատվիրագանցության,  
մեղսագործության ու հանցավոր գործունեության հետևանքով հեռացել է իր բնա-  
կան կարգավիճակից և ոչ թե բնությունից առհասարակ: Ուստի, ոչ թե բնականը կամ  
բնությունը նմանակելով կամ վերարտադրելով նա կարող է վերագտնել իր էություն-  
ընդ և կատարյալ արվեստ ստեղծելու բնատուր ձիրքը, ինչպես պնդում են հետազո-  
տողները, այլ միայն վերադառնալով իր «բնական-աստվածային» կարգավիճակին:  
Սարեկի արվեստը կատարյալ է, որովհետև նա իր «բնական» սահմաններից դուրս չի  
եկել, հավատարիմ է մնացել աստվածային ավանդին:

**Արդ կացի ի բնականին, որոյ պարզևն է յայտնութիւն,  
Որ ի լըրման ժամանակաց ընծայեցաւ փոքու հօտին... (էջ 320):**

Մարդը հենց այս հարցում պետք է ընդօրինակի «ավանդապահ» սարեկին: Քանի դեռ մարդը չի աշխատում և չի ձգտում վերադառնալ իր «բնական ստվածաշունչ» կարգավիճակին, այնժամ դեռ թերի ու անկատար կմնա նրա արվեստը: Որքան էլ նա կրթություն, ուսում ստանա, որքան էլ կարողանա պատրաստել կատարյալ երաժշտական գործիքներ, միևնույն է, երբեք իր արվեստով չի կարող հասնել բնականը պահպանած սարեկի արվեստին: Նա կշարունակի գործել այնպիսի չարիքներ, որոնք պատուհասներ կդառնան թե՛ մարդկության և թե՛ համայն տիեզերքի համար:

Տվյալ դեպքում անչափ կարևոր է պարզել ինչպես սարեկի վերոբերյալ մտքի («Արդ կացի ի բնականին, որոյ պարզևն է յայտնութիւն»), այնպես էլ «բնություն» հասկացության բովանդակությունը, քանի որ հետազոտողների վիճարկելի դատողությունները խարսխված են դրանց մեկնաբանությունների վրա: Այսպես, Կ. Միրումյանի կարծիքով «բնություն» հասկացությունը Սարկավագն օգտագործում է երկակի նշանակությամբ: Նախ՝ «բնությունը» մի տեսակ «բնական-էթերիկական» իդեալ, անհասանելի տիպար է արվեստագետների և արվեստ սովորողների համար: Երկրորդ՝ «բնություն» ասելով՝ նա ենթադրում է օբյեկտիվ իրականությունը, ռեալ կոնկրետ-զգայական իրերի և երևույթների աշխարհն իբրև գեղարվեստական ճանաչողության առարկա<sup>6</sup>: Գուցե այդպես է, սակայն ավելի ստույգ լինելու համար, պետք է նշել, որ «բնությունը» միջնադարյան մտածողի համար նախ և առաջ արարված գոյերի ամբողջությունն է, որոնցից յուրաքանչյուրը ունի իր «բնական» տեղը և նշանակությունը: Այսպիսի բնությունը աստվածային հետքերի գետեղարան է, որի հայեցողությունը հիմք է դառնում աստվածիմացության համար: «Յաղագս խրատու մանկանց» աշխատության մեջ Սարկավագը գրում է, թե «ի գործս ձեռաց Տեառն հայելով խոհականաբար իմաստասիրեմք գեղեցկայպէս առաջին զարուեստաւորն կազմութեան ամենայնի և զքաջահանճարն ճարտարայպէտ ի շինուածոյ անտի մեծութեան և գեղեցկութեան նկատելով և ճանաչելով: Որպէս ասէ Գիրն՝ փառաւորելոյ և զոհանալ և ապա զբնութեան հետախուզել իրս հանդերձ պատճառաւ և այլոց բիրոց, յոր և հաստատեցան իսկ լաւագունաց պատրաստել զնա անաւթ և գործարան: Եւ զայնպիսին ո՛չ վասն դատարկութեան և անխրատութեան տգեղացուցանել լկտի և յարատ հայեցումածաւք» (էջ 309-310): Այսպիսով, եթե բնությունը աստվածայինի մասին իրագեկող և աստվածային կարգին ենթարկվող գոյերի համախմբությունն է, ապա, ակնհայտ է, որ սարեկի «Արդ կացի ի բնականին, որոյ պարզևն է յայտնութիւն» արտահայտությունը պետք է հասկանալ այն իմաստով, որ նա չի հեռացել իրեն տրված բնական վիճակից, պահպանել է ավանդվածը, այսինքն՝ աստվածային-բնական կարգը: Սարեկը մարդուն կոչ է անում ոչ թե բնությունից սովորել կատարյալ արվեստի գաղտնիքները, ոչ թե նմանակել բնությանը կամ ներշնչվել բնությունից, այլ վերադառնալ իր բնական կարգավիճակին, ինչն էլ իր հերթին կվերականգնի մարդու աստվածատուր ձիրքերը: «Բան իմաստության» պոեմում կենտրոնական է դառնում մարդու բարոյական էության, բարոյական մաքրագործության թեման: Սարեկի համեմատությամբ մարդու անկատարությունը արվեստում պայմանավորված է նրա բարոյական անկմամբ՝ մեղսագործությամբ: Ըակատագրական այդ քայլը ավերիչ ազդեցություն է ունեցել մարդու բնության վրա, նրան շեղել «ճշմարիտ ուղուց»: Եվ փոխանակ ձգտելու վերադառնալ իր բնական վիճակին, մարդը իր հակաբնական գործունեությամբ ավելի է խտորվում, շեղվում և օտարանում թե՛ բնությունից և թե՛ ինքն իրենից: Քո անկատարության համար ոչ թե մեղադրի որիշներին, անձեղ արարածներին, ասում է սարեկը մարդուն, այլ ընդունիր, խոստովանիր քո մեղքը և ձրգտիր վերադառնալ քո նախնական կացությանը: Սարեկը ոչ թե բնապաշտական, այլ

<sup>6</sup> Կ. Միրումյան, նշվ. աշխ., էջ 189:

բարոյական դաս է տալիս մարդուն, հիշեցնում նրան Աստծո՛ւ և բոլոր արարածների հանդէպ իր բարոյական պատասխանատւութեան մասին:

Եթէ վերանանք «Բան իմաստութեան» պոեմի բուն համատեքստից, կարող ենք նշել, որ Սարկավագը բարձրացնում է բնութեան և մարդու, բնականի և քաղաքակրթականի փոխհարաբերության հարցը՝ կարծելով, որ քաղաքակրթության զարգացման ձևն ու բովանդակությունը, միջոցներն ու եղանակները ոչ թե ամրապնդում են բնություն-մարդ միասնությունը, այլ խարխլում են այդ միասնության հիմքերը, անջըրպէս ստեղծում բնութեան և մարդու միջև: Դրա հետևանքով խախտվում է տիեզերքի՝ որպէս «ընդհանուր տան» սկզբնական ներդաշնակությունը: Մարդու բարոյական անկումը, անհետատես գործունեությունը պատճառ են դառնում տիեզերական «բնապահպանական» աղետների առաջացման: Փաստորեն հայ մտածողը արծարծում է միանգամայն «ոուտոյական» թեմա՝ բնութեան և քաղաքակրթության հարաբերակցության հարցը: Քաղաքակրթությունը մարդուն մոտեցնո՞ւմ է բնութեանը, թե՞ հեռացնում է դրանից, կատարելագործո՞ւմ է մարդու բնությունը, նպաստո՞ւմ է արվեստների և գիտության զարգացմանը, թե՞ հակառակը: Հետաքրքիր է նշել, որ այս թեման շոշափվում է նաև Դավիթ Անհաղթի «Լուծմունք Սահմանաց գրոց» երկի անանուն մեկնության մէջ: Դեռևս 1980թ. հրատարակելով այդ երկի ընդարձակ տարբերակի քննական բնագիրը, բնագրի հրատարակիչներ Ա. Մաղոյանը և Հ. Միրզոյանը կարծիք են հայտնել, որ դրա հեղինակը ամենայն հավանականությամբ Հովհաննէս Սարկավագն է՝: Անանուն մեկնության հեղինակը կատարում է հետևյալ հարցադրումը. կարո՞ղ է մարդը փիլիսոփայության օգնությամբ մեղցնել իր բնութեանը խորթ, օտար ու անհարիր, այսպէս կոչված «եկամուտ» ախտերը, այսինքն՝ մնալ «ի բնադիր արդարութիւն» և լինել «բարեպաշտախոհեմ և արի և ողջախոհ»: Անդրադառնալով այս հարցին՝ նույն հեղինակները մեկ այլ հոդվածում գրում են, որ մեկնիչը մարդկային պատմության փորձի ընդհանրացման հիման վրա ցույց է տալիս, որ մի կողմից մարդկային քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց մարդը ձեռք է բերում նորանոր ախտեր, իսկ մյուս կողմից նրա մէջ ուժեղանում է դրանցից ազատվելու ձրգտումը, մի կողմից նա մեծամեծ հաջողությունների է հասնում արվեստների ու գիտություններից և ամենից առաջ փիլիսոփայության ասպարեզում, որի հիմնական նպատակներից մեկը մարդուն իր բնական վիճակին վերադարձնելն է, իսկ մյուս կողմից նա գնալով ավելի ու ավելի է հեռանում բնական վիճակից, օտարանում բնությունից: Այլ խոսքով, հայ մեկնիչը կոահում է հասարակական առաջընթացի բարդ ու հակասական բնույթը և միաժամանակ մերժում էտղարածի ամեն մի հույս ու հնարավորություն<sup>9</sup>: Ի դեպ, շարունակելով անանուն «Լուծմունքի» աղբյուրագիտական ուսումնասիրությունը, Հ. Միրզոյանն անառարկելիորեն ասպացուցել է, որ «Լուծմունքն» սկզբնապէս ունեցել է ավելի մեծ ծավալ, բայց ինչ-ինչ պատճառով առանձնացվել է «Պատճառ Սահմանաց գրոց» ներածական հատվածը և դարձել ձեռագրական ինքնուրույն միավոր<sup>10</sup>: Իսկ բոլորովին վերջերս հրատարակած «Հովհաննէս Սարկավագ իմաստասերը «Լուծմունք «Սահմանաց գրոց» երկի հեղինակ» ուշագրավ հոդվածում Հ. Միրզոյանը, գաղափարական ակնհայտ ընդհանրություն է տեսնում «Լուծմունքի» և «Բան իմաստութեան» պոեմի միջև, և դա, ի թիվս մի շարք այլ կարևոր փաստերի, կոպան է դարձնում «Լուծմունքը» Սարկավագի գրչին վերագրելու համար: Նա գրում է. «ՀՀնարկելով փիլիսոփայության անհաղթայի սահմանումներից հրորորդը, համաձայն որի փիլիսոփայությունը Աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության՝ մեկնիչը գրում է. «Ու նման լինելն Աստուծոյ այն է, որ բնադիր արդարութիւնն մնա և բարեպաշտ կայ, խոհեմ և արի, և ողջախոհ, զի զայս Աստուած եղ ի ստեղծմանն ի մեզ նմանութիւն: Եւ ծանի՛ր, որքան և քանայ մարդն իմաստասիրութիւն, չկարէ յայն ելանել,

<sup>9</sup> Տե՛ս Ա. Մաղոյան, Հր. Միրզոյան, Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» անանուն մեկնությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, թիվ 1, էջ 119:

<sup>10</sup> Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Ա. Գ. Մաղոյան, «Լուծմունք Սահմանաց գրոց» երկի տեսական արծեքը, «Դավիթ Անհաղթ» հոդվածների ժողովածու, Եր., 1980, էջ 216:

<sup>11</sup> Մանրամասն տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Արդո՞րք ամբողջական աշխատություն է «Պատճառ սահմանաց գրոցն»-ը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2000, թիվ 1, էջ 73-77:

յոր ունէր նախ քան գնեղանչելն: Վասնզի օտարացաք ի բնականէն»<sup>12</sup>: Ըստ Հ. Միր-գոյանի, եթե «Բան իմաստութեան» պոեմի հիմնական գաղափարը սարյակի «կացի ի բնականին» միտքն է, ապա «Լուծմունքում» այդ նույն միտքն արտահայտված է մարդու տեսանկյունից<sup>13</sup>: Այստեղ ակնհայտորեն ճշվում է, որ բնությունից, բնականից մարդու օտարման պատճառը մեղսագործությունն է: Ինչպես տեսանք, բնությունից մարդու օտարման գաղափարը արծարծվում է նաև «Բան իմաստութեան» քերթվածում, և բերվում է նույն փաստարկը: Սարկավագը կարծում է, որ քաղաքակրթության զարգացումը, քանի որ դրա հիմքում ընկած է նախնական մեղսագործությունը, մարդուն ոչ թե մոտեցնում, այլ, ընդհակառակը, հեռացնում, օտարում է բնությունից: Հայ մտածողը արծարծում է այսօրվա համար խիստ այժմեական այն հարցը, որ մարդը՝ որպես բանական և ինքնիշխան էակ, որպես տիեզերական կարգի հնարավոր խախտող, բարոյական պատասխանատվություն է կրում «ընդհանուր տան» անվտանգության և կարգ ու կանոնի պահպանման համար: Իր պահանջմունքների բավարարման հետևից ընկնելով՝ մարդը անխնա կողոպտում և անբուժելի վերք է հասցնում բնությանը, խախտում է ի վերուստ հաստատված կարգը՝ չմտածելով, որ դրանով իսկ սասանում է իր գոյության հիմքերը: Սարկավագի պոեմում, հասկանալի է, խոսքը վերաբերում է ոչ թե մարդկությանը համակած ներկա բնապահպանական ճգնաժամի, այլ բարոյական ճգնաժամի մասին, թեև դրանց առաջացման պատճառները միանման են:

Վերջարարյալը հիմք է տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

ա) Հովհաննես Սարկավագ Խմաստասերի «Բան իմաստութեան» քերթվածում սարյակի և մարդու արվեստի շուրջ ծավալված բանավեճը առիթ է դառնում մարդու էության ու կոչումի, բնական-աստվածայինի և մարդկայինի, բնության և քաղաքակրթության հարաբերակցության իմաստասիրական-աստվածաբանական հարցերի քննարկմանը:

բ) Սարկավագը այս երկում առհասարակ չի շոշափում աստվածային Հայտնության հարցը, ուստի չի ժխտում և չի հաստատում Հայտնությունը որպես արվեստի աղբյուր:

գ) Ըստ Սարկավագի՝ մարդու արվեստի անկատարության պատճառը մեղսագործությունն է: Խախտելով աստվածային-բնական կարգը, դրանով իսկ նաև, «ընդհանուր տան» ներդաշնակությունն ու կարգավորվածությունը՝ մարդը հայտնվել է անբնական վիճակում կամ օտարվել է բնականից: Ուստի, ոչ թե բնությանը մմանակելով կամ բնականը վերարտադրելով նա կարող է վերագտնել կատարյալ արվեստ տեղեղծելու իր բնատուր ձիրքը, այլ միայն ձգտելով վերադառնալ իր «բնական-աստվածային» էությանն ու կարգավիճակին: Սարեկի արվեստը կատարյալ է, որովհետև նա դուրս չի եկել բնականի սահմաններից, պահել է Աստծո՞ւ ավանդվածը:

դ) «Բան իմաստութեան» քերթվածում կարևոր է դառնում մարդու բարոյական կերպարի, Աստծո, տիեզերքի և արարածների համար մարդու բարոյական պատասխանատվության հարցը:

**С. А. ЗАКАРЯН - Вопрос взаимоотношения человека и природы в поэме «Слово мудрости» Ованеса Саркавага.** - В научной литературе распространена точка зрения, согласно которой Ованес Имастасер в своей поэме «Слово мудрости» отрицает Откровение как источник искусства и призывает художника учиться у природы. Анализ содержания поэмы приводит, однако, к следующим выводам:

1. Саркаваг не отрицает Откровение как источник искусства по той простой причине, что не обсуждает этот вопрос в поэме.

2. По Саркавагу, причиной несовершенства человеческого искусства является грехопадение. В отличие от Сарека, представителя природы, человек нарушил естественнo-божественный порядок, гармонию «общего дома», вследствие чего утратил способность создавать совершенные творения искусства. Чтобы вновь обрести эту способность, человеку нужно не имитировать природу, а восстановить свой прежний божественно-естественный статус.

<sup>12</sup> Հ. Միրգոյան, Հովհաննես Սարկավագ Խմաստասերը «Լուծմունք - Սահմանաց գրոց» երկի հեղինակ, «Բաներ Երևանի համալսարանի», 2002, թիվ 1, էջ 100:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը: